**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

***ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ***

30.05.2012թ.

ք.Մասիս

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 96 -ը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Հ. Օհանյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, Արարատի մարզի ՋՕԸ-ների տնօրեններ, առողջապահական հիմնարկների տնօրեններ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

***Օ Ր Ա Կ Ա Ր Գ***

***1.*** Մարզի համայնքների 2012 թ. չորս ամիսների բյուջեների կատարման մասին:

*/ Զեկ'. ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ' Գ. Եղիազարյան /*

***2.*** 2011թ. ընթացքում և 2012թ. առաջին եռամսյակում տեղական ինքնա-կառավարման մարմինների կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ:

*/Զեկ'. զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ' Հ. Հակոբյան /*

***3.*** Սանիտարական վիճակի և համայնքներում աղբահանության, բարեկարգման աշխատանքների մասին:

*/Զեկ'. քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ' Ե. Հակոբյան/*

***1. Լսեցին***

Մարզի համայնքների 2012 թ. չորս ամիսների բյուջեների կատարման մասին ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

***Արտահայտվեցին՝***

մարզպետ Է. Բարսեղյանը, Դալար համայնքի ղեկավար Գ. Ալեքսանյանը:

***Հանձնարարվեց՝***

- *մարզպետի տեղակալ Ս. Մինասյանին՝*

ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ վարձավճարների գանձման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

***2. Լսեցին՝***

2011թ. ընթացքում և 2012թ. առաջին եռամսյակում տեղական ինքնա-կառավարման մարմինների կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների մասին զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Հակոբյանի զեկուցումը :

/կցվում է/

***Արտահայտվեց՝*** մարզպետ Է. Բարսեղյանը, Արարատի քաղաքապետ Ա. Բաբայանը:

***Հանձնարարվեց՝***

- *մարզպետի տեղակալ Ս. Մինասյանին՝*

ներկայացնել տեղեկատվություն ՝ համայնքների վարչական սահմաններում արտաքին գովազդի հաշվառման վերաբերյալ, միաժամանակ նախապատրաստել և համայնքների ղեկավարներին ուղարկել շրջաբերական վերոնշյալ հարցի կանոնակարգման հետ կապված,

- *մարզպետի տեղակալ Ս. Մինասյանին և զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Հակոբյանին՝*

10 օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն՝ համայնքներում առկա գազի և բենզինի լցակայաններին տրամադրված լիցենզիաների , նրանց կողմից տեղական տուրքերի վճարման վերաբերյալ:

***3. Լսեցին***

Սանիտարական վիճակի և համայնքներում աղբահանության, բարեկարգման աշխատանքների մասին քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ե. Հակոբյանի զեկուցումը:

***Արտահայտվեց՝*** մարզպետ Է. Բարսեղյանը:

*Հանձնարարվեց՝*

- *համայնքների ղեկավարներին՝* համայնքներում սանիտարական մաքրման և հսկողության տակ պահել համայնքներում սանիտարական մաքրման և աղբահանության կազմակերպումը:

Նիստի վերջում ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Հ. Օհանյանը հանդես եկավ ՀՀ կառավարության առընթեր կադաստրի պետական կոմիտե համայնքների բնակչության անձնագրերի և սոցիալական քարտերի տվյալների տրամադրման գործընթացն արագացնելու մասին հայտարարությամբ :

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Է. Բարսեղյանը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ